

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ԼԱՅՊՑԻԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՆԵՐՈՎ ՄԻՋԱԶԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

30 օգոստոսի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի մայիսի 26-ին Լայպցիգում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Նանրապետության կառավարության միջեւ ավտոմոբիլային ճանապարհներով միջազգային ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 3 օգոստոսի 2011թ. ՆՆ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասպանի Նանրապետության փրանսպորտի եւ կապի նախարար Մ. Վարդանյանի գրավոր բացատրությունը, հեղափոխելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**։

Նայասպանի Նանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Նանրապետության կառավարության միջեւ ավտոմոբիլային ճանապարհներով միջազգային ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների մասին համաձայնագիրն ստորագրվել է 2011 թվականի մայիսի 26-ին՝ Լայպցիգում։

Համաձայնագրի նպատակն իրավահավասար եւ փոխշահավետ սկզբունքների հիման վրա Կողմերի պետությունների միջեւ եւ իրենց փարածքների փարանցմամբ ավտոմոբիլային ճանապարհներով իրականացվող միջազգային ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների դյուրացումն ու կանոնակարգումն է՝ Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան։

Համաձայնագրով մանրակրկիտ կերպով նախատեսված են Կողմերի միջեւ կանոնավոր փոխադրումների եւ ոչ կանոնավոր փոխադրումների իրականացման կարգը եւ առանձնահատկությունները։

Համաձայնագրով Նայասպանի Նանրապետությունը, ի թիվս այլնի, պարտավորվում է՝

- երկկողմ եւ փարանցիկ փրանսպորտային երթուղիների կանոնավոր փոխադրումներ իրականացնելու համար Նայասպանի Նանրապետության իրավասու մարմինների կողմից փրամադրել առավելագույնը հինգ փարի ժամկետով թույլտվություն, որը փրամադրվում է երկկողմ համաձայնագրով՝ Կողմերի ներքին օրենսդրությանը համապատասխան,

- ոչ կանոնավոր փոխադրումների համար, բացառությամբ Համաձայնագրով նշվածների, սրանալ Գերմանիայի Դաշնային Նանրապետության իրավասու մարմին թույլտվությունը՝ դրա համար դիմումն ուղիղ կապով ուղարկելով Գերմանիայի Դաշնային Նանրապետության իրավասու մարմին փոխադրումների մեկնարկից առնվազն չորս շաբաթ առաջ,

- Գերմանիայի Դաշնային Նանրապետության իրավասու մարմնից փոխադրողների համար ստանալ թույլտվություն՝ ավտոտրանսպորտային միջոցներով Նամաձայնագրի երկու կողմերի միջև բեռնափոխադրում իրականացնելու կամ Գերմանիայի Դաշնային Նանրապետության փարաձքով փարանցում կատարելու համար,

- ապահովել, որպեսզի Գերմանիայի Դաշնային Նանրապետության փարաձքում փեղակայված երկու վայրերի միջև ուղեւորների փոխադրում չիրականացվի ՆՏ փարաձքում գրանցված ավտոբուսով (կաբոտաժի արգելք),

- ապահովել, որպեսզի Նայաստանի Նանրապետության փարաձքում հաստատված փոխադրողները չփոխադրեն բեռներ Գերմանիայի Դաշնային Նանրապետության փարաձքում գտնվող երկու վայրերի միջև (կաբոտաժի արգելք)՝ բացառությամբ Նամաձայնագրով նախատեսված դեպքերի,

- ձեռնարկել միջոցներ, որպեսզի փոխադրման թույլտվություն չպահանջվի այն դեպքերում, որոնք նախատեսված են Նամաձայնագրով,

- ապահովել, որպեսզի Գերմանիայի Դաշնային Նանրապետության փոխադրողների տրանսպորտային գործընթացը եւ դատարկ վագրը, որոնք իրականացվում են Նամաձայնագրին համապատասխան, ազատվեն մաքսային ձեւակերպումների ժամանակ զանձվող մաքսային վճարներից եւ այլ հարկերից ու տուրքերից, ինչպես նաեւ թույլտվության պահանջից՝ Նայաստանի Նանրապետության փարաձք Նամաձայնագրով նախատեսված կոնկրետ ապրանքները ներմուծելու ժամանակ,

- խրախուսել, որպեսզի շրջակա միջավայրի պահպանության նպատակներից ելնելով միջազգային ավտոմոբիլային փոխադրումներում կիրառվեն մաքուր եւ ցածր ձայն արձակող ավտոմոբիլային միջոցներ, որոնք հագեցած կլինեն բարձրակարգ անվտանգության սարքավորումներով,

- ապահովել, որպեսզի Նայաստանի Նանրապետության փոխադրողները ենթարկվեն Գերմանիայի Դաշնային Նանրապետության փարաձքում գործող ճանապարհատրանսպորտային եւ մաքսային օրենսդրության կանոններին,

- ապահովել, որպեսզի Նայաստանի Նանրապետության փոխադրողի կամ վարորդի կողմից Գերմանիայի Դաշնային Նանրապետության փարաձքում գործող օրենքի կամ Նամաձայնագրի դրույթների կոպիտ կամ շարունակական խախտումների դեպքում, Նայաստանի Նանրապետության իրավասու մարմինները, Գերմանիայի Դաշնային Նանրապետության իրավասու մարմինների պահանջով, որի փարաձքում

կապարվել են նշված խախտումները, իր փարածքում գրանցված ավտոմոբիլային միջոցների համար գործող օրենքների շրջանակներում ձեռնարկվեն Նամաձայնագրով նախատեսված՝ խախտումները վերացնելու միջոցներ,

- Նամաձայնագրի դրույթներին համապատասխան ձեւավորել Նամաբեղ հանձնաժողով՝ Նամաձայնագրի հստակ կապարումը երաշխավորելու, Նամաձայնագրին առնչվող այլ հարցերը, որոնք վերաբերում են ավտոմոբիլային ճանապարհներով միջազգային փոխադրումներին, պատշաճ կերպով լուծելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի մայիսի 26-ին Լայպցիգում ստորագրված՝ Նայաստանի Նանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Նանրապետության կառավարության միջեւ ավտոմոբիլային ճանապարհներով միջազգային ուղևորափոխադրումների եւ բեռնափոխադրումների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

30 օգոստոսի 2011 թվականի
ՍԴՈ-985